



**Ն. ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵՂԻՆԵ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՅՅԸ ԳԱԼՈՒՍ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ
Ի ԼԻԶՊՈՆ**

Սեպտեմբեր 16ին, Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպոս. Տէրաէրեան, բարե-
խնամ Պատրիարք Ս. Աթոռոյո, ընկերակցութեամբ Գերշ. Տ. Շահէ Արքեպիս-
կոպոսին այցելեց Լիզպոն։ Իրեն կ'ընկերակցէին նաև Գերշ. Տ. Գիւտ նպա. Նա-
գաշեան Փարիզէն, և Պրի. Կարպիս Հինդեան, քարտուղար Պատրիարքարտ-
նիս։

Օդակարանին մէջ Ն. Ամենապատութիւնը ընդուժուեցաւ Գալուստ
Կիւլպէնկեան Հիմնարկութեան ներկայացուցիչներուն կողմէ, գլխաւորու-
թեամբ Պրի. Գրիգոր Կիւլպէնկեանի և Պրի. Խոպէր Կիւլպէնկեանի։ Ն. Ամե-
նապատութիւնը առաջնորդուեցաւ պատոյ Հիւրասինեակը, ուր յայտնեց իր
ուրախութիւնը անզամ մը և գտնուելու Փորթուկալի Հիւրընկալ մայրաքաղա-
քին մէջ, ու հանդիպելու Կիւլպէնկեան Հիմնարկութեան պատուարժան դեկա-
վարներուն։ Թերթի թղթակիցներուն յայտնելէ ետք իր ուրախութիւնը, Ն. Ա-
մենապատութիւնը և իր շքախութը առաջնորդուեցան Հիւրանոց, ուր հանձ
գտնացան։ ապա Ն. Ամենապատութիւնը և իր ընկերակիցները Կիւլպէնկեան
Հիմնարկութեան Նախագահ Տիար Աղեկածո տէ Փերտիկանի ընկերակցու-
թեամբ այցելեցին Փորթուկալի Կարտինալին, վերջինիս պալատին մէջ։ Կար-
տինալ-Պատրիարք Անթոնիօ Ռէպէյրա շատ սիրալիք ընդունելութեան ընթաց-
քին յայտնեց իր փափաքը՝ անդամ մը ևս այցելելու Երուաղէմ, և մանաւանդ
իր գնահատանքը Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան կատարած մարդու-
սէր և իմաստուն աշխատանքին, ի նպաստ Փորթուկալի և ամբողջ մարդկու-
թեան։

Երկրորդ օրը Ն. Ամենապատութիւնը այցելեց Գ. Կիւլպէնկեան

Հիմնարկութեան նոր չէնքը, ուր ընդունուեցաւ Հիմնարկութեան Վաեմ. Նախագահն և անմիջական գործակիցներուն կողմէ: Նախ այցելեց Հայկական Գործերու Գրասենեակը, ուր Պժմ. Ռոպէր Կիւլպէնկեանի, Պրն. Կորիւն Քէշիշեանի և Պրն. Վահրամ Մավեանի հետ կարծիքներու փոխանակութիւն ունեցաւ. Պատրիարքարանիս պէտքերուն մասին: Ապա Տիար Փերտիկանի գրասենեակին մէջ, Պատրիարք Սրբազնը շեշտեց Ս. Յարութեան Տաճարի գմբէթի վերաշինութեան հետեանքով ստեղծուած նիւթական նոր օգնութեան մը անհրաժեշտութիւնը: Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը Ս. Յարութեան Տաճարի վերանդուգութեան համար ցարդ վճարած էր 100,000 սթերլին, սակայն այժմ երբ սկսաւ Տաճարի կեղրունական գմբէթի վերանդուգութիւնը, ի յայտ եկաւ թէ Պատրիարքարանս ի վիճակի չէ իր միջոցներով շարունակելու այս ազգապարծան գործը, և հետևաբար պէտք ունի արտաքին օգնութեան: Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան նախագահն և իր գործակիցները վստահեցուցին Ն. Ամենապատուաթիւնը թէ պիտի ընեն իրենց կարելին՝ հոգալու մաս մը նախատեսուած ծախսին:

Պատրիարք Սրբազնը և իր ընկերակիցները առաջնորդուեցան Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան նոր չինքի զանազան մասերը, իոր հետաքրքրութեամբ պտըսնեցան Թանգարանը, յատուկ ուշադրութեամբ դիտեցին Հիմնարկութեան հիմնադիր՝ Գալուստ Կիւլպէնկեանի Փարիզի պալատին զանազան մասերու վերակազմուած պատկերը, ուր հարազատօրն ոգեկըչուած է մեծ զայուն առանձնաբառուկ անձնաբառութիւնը, և ճաշով հիւրասիրուեցան Հիմնարկութեան նախագահ Փերտիկանի կողմէ:

Յաջորդ օր, Սեպտեմբեր 18ին, նորին Ամենապատուաթիւնը և իր հետեւրդները հիւրասիրուեցան Պրն. Ռոպէր Կիւլպէնկեանի կողմէ, իր ամառանոցին մէջ, և յետ միջօրէին հրաժեշտ առին Հիմնարկութեան ներկայացուցիչներէն ու մեկնեցան դէպի Փարիզ: